ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 2.32
ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-03/21

ք. Երևան «08» 09 2021 թ.

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ-ն ի դեմս գլխավոր տնօրեն Ա.Գասպարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ԴԱՎԻԹ ԷՆԵՐՋԻ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Պ.Մխիթարյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Անտենային աշտարակի և ՄՌ սարքավորումների տեղակայման համար անհրաժեշտ կառույցների շինարարական, սարքավորումների և անտենային աշտարակի բեռնափոդադրման, ինչպես նաև մոնտաժման աշխատանքները («Ավրորա-2» մոնոիմպուլսային ռադարի (այսուհետ՝ ՄՌ) և 21մ բարձրությամբ անտենային աշտարակի տեղակայման համար անհրաժեշտ շինարարական աշխատանքներ) (այսուհետ՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար: «Անդրանիկ» վերահաղորդիչ կայանը գտնվում է Արարատ մարզի Ուրցալանջ գյուղի հարակից լեռան գագաթին՝ 2150 մ բարձրության վրա:

1.1.1. Փորձաքննություն անցած նախագծա-նախահաշվային փաստաթղթերի համաձայն Աշխատանքներն իրենց մեջ ներառում են՝

- «Ավրորա-2» ՄՌ սարքավորումների կոնտեյների և անտենային աշտարակի տեղադրման համար միաձույլ երկաթբետոնե հիքերի իրականացում:
- Աշտարակի տեղադրման համար 100մմ հաստությամբ նախապատրաստական շերտի վրա իրականացվում է 5000×5000մմ հատակագծային չափերով միաձույլ 500մմ բարձրությամբ երկաթբետոնե հիմնային սալ՝ չորս հենասյուներով, որոնց մեջ տեղադրվում է խարսխաձողեր մետաղական աշտարակի ամրակցման համար:
- Կոնտեյների տեղադրման համար 100մմ հաստությամբ նախապատրաստական շերտի վրա իրականացվում է 6000 x 2400 մմ հատակագծային չափերով միաձույլ երկաթբետոնե հիմնային սալ՝ վեց հենասյուներով, որոնց մեջ տեղադրվում են մետաղական ներդիրներ և եռակցմամբ տեղադրվում են 16 մակնիշի շվելերներ:
- Անտենային աշտարակի (20-21մ բարձրությամբ) մոնտաժում:
- Անտենային կոնտեյների (մոդուլի) և անտենայի տեղակայում ու մոնտաժ անտենային աշտարակի հարթակի վրա:
- «Անդրանիկ» ՎԿ տանող լեռնային ճանապարհի դժվարանցանելի հատվածների փոսալցում և հարթեցում:
- Աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտ տեխնիկայի, նյութերի, ապրանքների և սարքավորումների, ինչպես նաև աշխատուժի փոխադրում:
- ՄՌ սարքավորումների կոնտեյների և անտենային աշտարակի հողանցում:

– ՄՌ սնուցման և կապի մալուխների անցկացան համար լարատարի (մալուխատարի) մոնտաժ:

1.1.2. Փորձաքննություն անցած նախագծա-նախահաշվային փաստաթղթերը ներկայացված են Հավելված 1-ում:

1.1.3. Կապալառուն, Պատվիրատուի կողմից տրամադրված նախագծա-նախահաշվային փաստաթղթերի հիման վրա պետք է իրականացնի նշված Աշխատանքները, նկատի ունենալով հետևյալ առանձնահատկությունները՝

-- Անտենային աշտարակի տեղակայումը և մոնտաժումը, ինչպես նաև անտենային աշտարակի հարթակի վրա անտենային կոնտեյների (մոդուլի) և անտենայի տեղակայումն ու մոնտաժը, պետք է իրականացվի ամբողջ ծավալով, Պատվիրատուի կողմից նշանակված մասնագետի (մասնագետների) ղեկավարության ներքո: Անտենային աշտարակի բնութագիրը, գծապատկերը և անհրաժեշտ աշխատանքների ծավալը ներկայացված են Հավելված 5-ում:

-- Անտենային աշտարակի հիմքի բետոնալցման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել աշտարակի մետաղական հիմքի կոնստրուկտիվ չափերը, որպեսզի մեծ ճշգրտությամբ տեղադրվեն համապատասխան խարսխաձողերը՝ հետագայում մետաղական աշտարակի հիմքը ճշգրիտ տեղադրելու և ամրակցելու համար:

– Աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտ ապրանքների և սարքավորումների փոխադրումը իր մեջ ներառում է լեռնային ճանապարհի դժվարանցանելի հատվածների փոսալցման և հարթեցման աշխատանքներից հետո անտենային աշտարակի և ՄՌ սարքավորումների փոխադրումը «Անդրանիկ» ՎԿ համապատասխան տեխնիկական միջոցներով: Անտենային աշտարակի և ՄՌ սարքավորումների անվտանգ և անվնաս տեղափոխելու համար պատասխանատվություն է կրում Կապալառուն:

Անտենային աշտարակի և ՄՌ սարքավորումների քանակը, չափերը և զանգվածը ներկայացված են Հավելված 6-ում:

– Աշխատանքների ավարտից հետո «Անդրանիկ» ՎԿ տանող լեռնային ճանապարհի վնասված հատվածների վերականգնման աշխատանքներ:

– ՄՌ սարքավորումների կոնտեյների և անտենային աշտարակի հողանցումը պետք է իրականացվի երկու անկախ հողանցման հանգույցներով և համապատասխանի ԷՍՊ պայմաններին:

– ՄՌ սնուցման և կապի մալուխների անցկացան համար լարատարի (մալուխատարի) մոնտաժը Կապալառուն իրականացնում է հաշվի առնելով լեռնային պայմանների եղանակային առանձնահատկությունները, համաձայնացնելով պատվիրատուի հետ:

1.2. Պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ստանդարտներին, նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3. Պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ պայմանագրի կնքման օրվանից հաշված 40 օրացույցային օր:

1.4. Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N2):

1.5. Աշխատանքների կատարման ողջ ընթացքում Կապալառուի կողմից անտենային աշտարակին և ՄՌ սարքավորումներին պատճառած վնասների հետևանքով առաջացած բոլոր ծախսերը Պատվիրատուին փոխհատուցում է Կապալառուն Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետներում:

1.6. Քանի որ տեղադրվող մոնոիմպուլսային երկրորդային ռադարի ծառայության ժամկետը սահմանված է՝ ոչ պակաս քան 15 տարի, ապա երկաթբետոնե և բետոնե հիմքերի շահագործման ժամկետը նույնպես սահմանվում է ոչ պակաս քան 15 տարի: Շահագործման ժամկետում պիտանիության պահանջները պետք է բավարարեն ՀՀՇՆ 52-01- «Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերին:

1.7. Երկաթբետոնե և բետոնե հիմքերի երաշխիքային ժամկետը սահմանվում է 2 տարի: Երաշխիքային ժամկետի ընթացքում բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներին ներկայացվող ընդհանուր պահանջներն են թույլատրելիից ավել բացվածքների լայնությամբ ճաքերի և բետոնի այլ արատների բացակայությունը:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1. Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2. Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

2.3. «Անդրանիկ» վերահաղորդիչ կայանում բացակայում են գիշերելու, հանգստանալու պայմանները, ինչպես նաև շինարարական աշխատանքների համար պահանջվող ջուրը, որոնք պետք է ապահովի Կապալառուն:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը. Պատվիրատուի ներկայացուցիչներն իրավունք ունեն ցանկացած ժամանակ ներկա լինել Աշխատանքների կատարման ընթացքին և ստուգել դրանց համապատասխանությունը նախագծա-նախահաշվային փաստաթղթերի պահանջներին:

3.1.2. Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3. Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4. Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար.

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը).

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծա-նախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5. Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում.

3.1.6. Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7. Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1. Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2. Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3. Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4. Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1. Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2. Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1. Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով,

մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2. Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3. Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդաափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4. Ապահովել բեռնափոխադրման աշխատանքների կատարումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին համապատասխան:

3.4.5. Կապալառուն պարտավոր է Աշխատանքների ընթացքում ապահովել աշխատանքի անվտանգության պահանջները:

3.4.6. Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.7. Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.8. Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.9. Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.10. Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11. Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Կատարված Աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

4.2. Մինչև պայմանագրով Աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Աշխատանքը

Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.3. Եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.4. Եթե կատարված Աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.5. Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված Աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված Աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.6. Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.7. Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության

կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված Աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 24 379 439 (քսանչորս միլիոն երեք հարյուր յոթանասունինը հազար չորս հարյուր երեսունինը) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2. Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3. Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ (Վերոհիշյալ Աշխատանքների համար վճարումները կատարվելու են ողջ ծավալով իրականացված Աշխատանքների ավարտին՝ փաստացի կատարված աշխատանքների հիման վրա, ըստ վավերացված կատարողական ակտերի և հանձման ընդունման արձանագրության), պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2. Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3. Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև Աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4. Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5. Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6. Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7. Տույժերի և(կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2. Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և

տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4. Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6. Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել Աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե Աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7. Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9. Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11. Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 4.1, N 5 և N 6 հավելվածները համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12. Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ Երևան-42, Ի. Գասպարյան 33 Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ ԱՇԻԲ «Զվարթնոց» մաս. ՀՎՀՀ 01216144 Գլխ. տնօրեն _____Ա.Գասպարյան /ստորագրություն/ Կ.Տ	«ԴԱՎԻԹ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ ՀՀ, ք. Երևան, Այգեձորի 1-նրբ., 22 շ., բն. 53 Հ/Հ՝ 1570016078840100 ՀՀ դրամ «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ ՀՎՀՀ 00114704 Տնօրեն _____Պ. Մխիթարյան /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված 1

« 08 » 09 2021թ. կնքված

ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-03/21 ծածկագրով պայմանագրի 2,72

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

Անտենային աշտարակի և ՄՌ սարքավորումների տեղակայման համար անհրաժեշտ կառույցների շինարարական, սարքավորումների և անտենային աշտարակի բեռնափոխադրման , ինչպես նաև մոնտաժման աշխատանքների կատարման

N N	Աշխատանքների անվանումը	Չ/Մ	Ծավալը	Միավորի արժեքը /հազ դրամ/	Ընդամենը /հազ դրամ/	Տոկոսային հարաբերություն
1	2	3	4	5	6	
	Շինարարական աշխատանքներ					
1	B-10 դասի բետոնից նախապատրաստական շերտ	մ³	2.7	40.0	108.00	
2	Միաձույլ ե/բ սյուների պատրաստում B-20 W4 դասի բետոնից	մ³	4	115.0	460.00	
3	Ամրանի արժեքը 36մմ A500c դասի	տն	0.186	670.0	124.62	
4	Ամրանի արժեքը 22մմ A500c դասի	տն	0.182	670.0	121.94	
5	Ամրանի արժեքը 12մմ A500c դասի	տն	0.087	670.0	58.29	
6	Ամրանի արժեքը 8մմ Ac-1 դասի	տն	0.04	670.0	26.80	
7	Միաձույլ ե/բ սալի պատրաստում B-20 W4 դասի բետոնից	մ³	12.5	74.0	925.00	
8	Ամրանի արժեքը 14մմ A500c դասի	տն	0.793	670.0	531.31	
9	Ամրանի արժեքը 12մմ A500c դասի	տն	0.126	670.0	84.42	
10	Ամրանի արժեքը 8մմ Ac-1 դասի	տն	0.066	670.0	44.22	
11	B-20 W4 դասի բետոնից հենապատերի պատրաստում	մ³	24	75.0	1,800.00	
12	4-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով, բարձելով ա/ինքնաթափերի վրա	մ³	126.5	1.0	126.50	

13	Ավելնորդ բնահողի տեղափոխում 7կմ	տն	240.35	1.8	432.63	
14	4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ³	35	3.6	126.00	
15	Բնահողի ետլիցք ձեռքով	մ³	35	1.2	42.00	
16	Բնահողի տոփանում	մ³	35	0.4	14.00	
17	Հիմքերի ջրամեկուսացում 2 շերտ բիտումի քսուկով	մ²	51.8	1.1	56.98	
18	Միաձույլ ե/բ սյուների պատրաստում B-20 W4 դասի բետոնից	մ³	0.1	119.0	11.90	
19	Ամրանի արժեքը 16մմ A500c դասի	տն	0.0076	670.0	5.09	
20	Ամրանի արժեքը 8մմ Ac-1 դասի	տն	0.0086	670.0	5.76	
21	Ներդիր թերթապողպատի տեղադրում	տն	0.005	1,303.0	6.52	
22	B-10 դասի բետոնից նախապատրաստական շերտ	մ³	1.7	38.0	64.60	
23	Միաձույլ ե/բ սալի պատրաստում B-20 W4 դասի բետոնից	մ³	7.2	62.0	446.40	
24	Ամրանի արժեքը 12մմ A500c դասի	տն	0.113	670.0	75.71	
25	Ամրանի արժեքը 10մմ A500c դասի	տն	0.225	670.0	150.75	
26	Ամրանի արժեքը 8մմ Ac-1 դասի	տն	0.066	670.0	44.22	
	Ընդամենը				**5,893.66**	24.533107%
	Հողանցում					
27	Անկյունավոր պողպատ 50x50x5մմ L=2.5մ	հատ	12	7.90	94.8	
28	Շերտապողպատ 40x4մմ	գմ	38	1.10	41.8	
29	Մալուխատարաի անցկացում 30x10սմ ցինկապատ թիթեղից	գմ	21	6.40	134.4	
	Ընդամենը				**271.0**	1.17391%
	Բեռնափոխադրում					
	Բեռնափոխադրման աշխատանքներ (Ռադարի սարքավորումներ և անտենա) (Կարգո-Հովտաշատ)	երթ	1	290.0	290.0	

	Բեռնափոխադրման աշխատանքներ (Ռադարի սարքավորումներ և անտենա) (Հովտաշատ-Անդրանիկ)	երթ	1	753.8	753.8	
	Բեռնափոխադրման աշխատանքներ (Մետաղական (անտենային) աշտարակ) (Երևան-Հովտաշատ)	երթ	1	675.0	675.0	
	Բեռնափոխադրման աշխատանքներ (Մետաղական (անտենային) աշտարակ) (Հովտաշատ-Անդրանիկ)	երթ	1	2,200.0	2,200.0	
	Ընդամենը				**3,918.8**	17.681309%
	ճանապարհի փոսալցման և հարթեցման աշխատանքներ	երթ	1	1,580.0	1,580.0	
	Ընդամենը				**1,580.0**	6.718897%
	Մոնտաժային աշխատանքեր					
	Մետաղական աշտարակի մոնտաժ	երթ	1	8,100.0	8,100.0	
	Անտենայի և անտենային կոնտեյների տեղադրում և մոնտաժում մետաղական աշտարակ վրա	երթ	1	2,200.0	2,200.0	
	Ընդամենը				**10,300.000**	49.892772%
	Ընդամենը				**21,963.459**	**100.00%**
	Շահույթ			**11.0%**	**2,415.980**	
	Ընդամենը, առանց ԱԱՀ				**24,379.439**	

Կապալառուն Աշխատանքները կատարում է ՎԿ <<Անդրանիկ>> օբյեկտում, որը գտնվում է Արարատ մարզի Ուրցալանջ գյուղի հարակից լեռան գագաթին՝ 2150մ բարձրության վրա:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
Երևան-42, Ի. Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մաս.
ՀՎՀՀ 01216144
Գլխ. տնօրեն

Ա.Գասպարյան
/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԴԱՎԻԹ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Այգեձորի 1-նրբ., 22 շ., բն. 53
Հ/Հ՝ 1570016078840100 ՀՀ դրամ
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՎՀՀ 00114704
Տնօրեն

Պ. Մխիթարյան
/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված 2

« 08 » 09 2021 թ. կնքված
ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-03/21 ծածկագրով պայմանագրի 2,72

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Անտենային աշտարակի և ՄՌ սարքավորումների տեղակայման համար անհրաժեշտ կառույցների շինարարական, սարքավորումների և անտենային աշտարակի բեռնափողադրման , ինչպես նաև մոնտաժման աշխատանքներ

N	Գործողության անվանումը	Ժամկետը
1.	Պայմանագրի հաստատում	(Ս)
2.	Ճանապարհի փոսալցման և հարթեցման աշխատանքներ (ընդհանուր 600 մետր երկարությամբ)	ոչ ուշ, քան, Ս + 15 օր
3.	Բեռնափոխադրման աշխատանքներ	ոչ ուշ, քան, Ս + 25 օր
4.	Շինարարական աշխատանքներ	ոչ ուշ, քան, Ս + 25 օր
5.	Հողանցման աշխատանքներ	ոչ ուշ, քան, Ս + 30 օր
6.	Մետաղական (անտենային) աշտարակի մոնտաժ	ոչ ուշ, քան, Ս + 35 օր
7.	Ռադարի անտենային կոնտեյների և անտենայի մոնտաժ աշտարակի վրա	ոչ ուշ, քան, Ս + 40 օր
8.	Պայմանագրի ավարտը	Ս + 40 օր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
Երևան-42, Ի. Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մաս.
ՀՎՀՀ 01216144
Գլխ. տնօրեն

---------------------**Ա.Գասպարյան**
/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԴԱՎԻԹ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Այգեձորի 1-նրբ., 22 շ., բն. 53
Հ/Հ՝ 1570016078840100 ՀՀ դրամ
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՎՀՀ 00114704
Տնօրեն

---------------------**Պ. Մխիթարյան**
/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված 3

«08» 08 2021 թ. կնքված

ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-03/21 ծածկագրով պայմանագրի 2.3.2

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45311151/1	Անտենային աշտարակի և ՄՌ-սարքավորումների տեղակայման համար անհրաժեշտ կառույցների շինարարական, սարքավորումների և անտենային աշտարակի բեռնափոդադրման , ինչպես նաև մոնտաժման աշխատանքներ										24 379 439	24 379 439	24 379 439	24 379 439

Վերոհիշյալ աշխատանքների համար վճարումները կատարվելու են ողջ ծավալով իրականացված աշխատանքների ավարտին՝ փաստացի կատարված աշխատանքների հիման վրա, ըստ վավերացված կատարողական ակտերի և հանձման ընդունման արձանագրության:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
Երևան-42, Ի. Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մաս.
ՀՎՀՀ 01216144
Գլխ. տնօրեն

Ա.Գասպարյան
/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԴԱՎԻԹ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Այգեձորի 1-նրբ., 22 շ., բն. 53
Հ/Հ՝ 1570016078840100 ՀՀ դրամ
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՎՀՀ 00114704
Տնօրեն

Պ. Մխիթարյան
/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված 5

«08» 09 2021թ. կնքված

ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-03/21 ծածկագրով պայմանագրի 2,72

Մետաղական անտենային աշտարակի բնութագիրը, գծապատկերը և անհրաժեշտ աշխատանքների ծավալը

Անտենային աշտարակ

Չափերը, (երկարություն լայնություն բարձրություն) – 2.5x2.5x20 մ

Ձանգված – ոչ պակաս 25 տոննա:





Մետաղական աշտարակի մոնտաժի աշխատանքները (առանց բետոնային աշխատանքների և առանց կոնստրուկցիայի տեղափոխման)

1. Խառատային աշխատանքներ-64հատ
2. Տակդիրների ձևավորում և անկեռներով պատրաստում-16կոմպլ
3. Մետաղական տակդիրների տեղադրում
4. Մետաղական կոնստրուկցիայի հիմք, աստիճաններ բազրիքներով-8հատ,
5. Մետաղական հարթակներ բազրիքներով-8հատ,
6. Բալկոն-1հատ,
7. Տանիք բազրիքներով-1հատ
8. Մոնտաժային տեխնիկա
9. Հանգույցների զոդում և ներկապատում

Անտենայի և անտենային կոնտեյների տեղադրում և մոնտաժում մետաղական աշտարակի վրա

1. Անտենային կոնտեյների (մոդուլի) տեղակայում ու մոնտաժ անտենային աշտարակի հարթակի վրա,
2. Անտենայի տեղակայում ու մոնտաժ անտենային կոնտեյների (մոդուլի) վրա,
3. Անտենային կոնտեյների (մոդուլի) և անտենայի հավասարեցում (юстировка),
4. Մալուխային սկուտեղների (кабельные лотки) տեղադրումը,
5. Անտենայի մոդուլի տակ շրջանակի տեղադրում:

Այլ անհրաժեշտ աշխատանքներ կոնստրուկցիային ավարտական տեսք տալու համար:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
Երևան-42, Ի. Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մաս.
ՀՎՀՀ 01216144
Գլխ. տնօրեն

Ա.Գասպարյան
/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԴԱՎԻԹ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Այգեձորի 1-նրբ., 22 շ., բն. 53
Հ/Հ՝ 1570016078840100 ՀՀ դրամ
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՎՀՀ 00114704
Տնօրեն

Պ. Մխիթարյան
/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված 6

«08» 09 2021թ. կնքված

ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-03/21 ծածկագրով պայմանագրի 2.7.2

Անտենային աշտարակի և ՄՌ սարքավորումների քանակը, չափերը և զանգվածը

N	անվանում	A*B*H մմ*մմ*մմ	քանակ	Միավորի քաշ
Մետաղական աշտարակի հանգույցներ				
1.	Հիմք	1000*2500*7000	3հատ	1707կգ
2.	1-ին կտոր*	3100*3100*10500	1հատ	8150կգ
3.	2-րդ կտոր	2600*2600*9500	1հատ	6650կգ
4.	Աստիճաններ	600*3500*400	6հատ	350կգ
5.	Բալկոն	1500*2500*1200	6հատ	167կգ
6.	Հարթակ	1800*1800*160	6հատ	500կգ
7.	Տանիք	4200*2450*1200	2հատ	1150կգ
Ռադարի սարքավորումներ				
8.	Բեռնախցիկ (կոնտեյներ)	6060*2440*2590	1հատ	5000կգ
9.	Բեռնախցիկ (կոնտեյներ)	2440*2800*2900	1հատ	4000կգ
10.	Փայտե արկղ	9000*1300*2500	1հատ	2500կգ
11.	Փայտե արկղ	2240*1300*2200	1հատ	500կգ
12.	Դիզել գեներատոր	1900*800*1600	1հատ	1050կգ

*- 1-ին կտորի 3100մմ չափերը պայմանաբորված են ելուստներով, տես նկարում:



ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
Երևան-42, Ի. Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մաս.
ՀՎՀՀ 01216144
Գլխ. տնօրեն

Ա.Գասպարյան
/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԴԱՎԻԹ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Այգեձորի 1-նրբ., 22 շ., բն. 53
Հ/Հ՝ 1570016078840100 ՀՀ դրամ
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՎՀՀ 00114704
Տնօրեն

Պ. Մխիթարյան
/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված 4

« » 2021 թ. կնքված
ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-03/21 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2021 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 2021 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » 20 թ. կնքված
ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-03/21 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____ _____-ի

Պատվիրատուի անունը Կապալառուի անունը (այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____ _____

պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն